ՀԻՄԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով:

1. Բյուջեի եկամուտների կատարողականը

Գավառ համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի եկամուտները ծրագրով նախատեսված 2,332,182.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2,381,066.9 հազար դրամ, որը կազմում է 102.1 %, արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի 2.1 % գերակատարում:

Պլանավորված 830,911.4 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց հավաքագրվել է 876,515.9 հազար դրամ, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 105,5 %-ով:

Նշված տարում վարչական բյուջեի հավաքագրած եկամուտների 36.8 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 63.2 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների, նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) և պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման հաշվին:

Գույքային հարկեր անշարժ գույքից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 134,544,3 հազար դրամ՝ կատարվելով 103,2 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 5,7 %-ը, իսկ գույքահարկ փոխադրամիջոցներից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 386,189,1 հազար դրամ՝ կատարվելով 119,0 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 16,2 % -ը:

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 8391,0 հազար դրամ՝ կատարվելով 107,8 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0.4 % -ը:

Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 13,981.8 հազար դրամ՝ կատարվելով 113,7 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0.6 % -ը:

Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով Գավառ համայնքին հատկացվել է ֆինանսական համահարթեցման դոտացիա և այլ դոտացիա 1,490,111,7 հազար դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիաներ՝ ազգային նվագարանների գծով/ կազմել է 9,984,9 հազար դրամ, որոնք ամբողջովին ֆինանսավորվել են:

Գույքի վարձակալությունից վճարները 2023 թվականի բյուջեով նախատեսված 44,460.9 հազար դրամի դիմաց համայնքի բյուջե մուտք է եղել 38,260,5 հազար դրամ՝ կատարվելով 86,1 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 1,6 % -ը:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները կազմել է 4,454.4 հազար դրամ, որն ամբողջովին ֆինանսավորվել է:

Տեղական վճարների մուտքերը կազմել է 171,634,8 հազար դրամ՝ կատարվելով 87.2 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 7,2 % -ը, որից աղբահանության վճարը կազմել է 51,696,5 հազար դրամ՝ կատարվելով 82,5 %-ով:

Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից մուտքերը կազմել է 14,007,3 հազար դրամ՝ կատարվելով 233.5 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0,6 % -ը:

Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կազմել է 1,107,7 հազար դրամ՝ կատարվելով 166,3 %-ով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել են 108,399,4 հազար դրամ՝ կատարվելով 100,3 %-ով:

Գավառ համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի եկամուտների կատարողականը ըստ վարչական շրջանների և առանձին եկամտատեսակների ունի հետևյալ կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:

2023 թվականի բյուջեով ֆոնդային մասի եկամուտ է ծրագրավորվել 1,832,539.8 հազար դրամ, որից՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ 411,596.2 հազար դրամ, տարեսկզբի ազատ մանացուրդ՝ 110,588.1 հազար դրամ, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր՝ 441,000.0 հազար դրամ, իսկ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) կազմել է 864,355.5 հազար դրամ: Ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 1,496.932.4 հազար դրամով, կամ 81.7 %-ով:

2. **Բյուջեի ծախսերի կատարողական**

2023 թվականի վարչական բյուջեով պլանավորված ծախսերը կազմել է 2,336,298.2 հազար դրամ, որը կատարվել է 2,161,413.9 հազար դրամով, կամ 92.5 %-ով:

Գավառ համայնքի 2023 թ. վարչական բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը:

Ծախսերի անվանումը	Պլան տարեկան	Փաստացի	Տոկոս
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ	**502249,4**	**436574,2**	86,9
Օրենսդիր և գործադիր մարմիններ	412819,4	364720,2	88,3
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4630,0	4495,6	97,1
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	84800,0	67358,4	79,4
Պաշտպանություն	1500,0	295,0	19,7
Տնտեսական հարաբերություններ այդ թվում՝	177639,9	172267,7	97,0
Գյուղատնտեսություն	107445,4	107072,1	99,7
Ոռոգում	2000,0	1616,5	80,8
Ճանապարհային տրանսպորտ	68194,5	63579,0	93,2
Շրջակա միջավայրի պաշտպանություն	215010,0	200138,3	93,1
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	69545,0	65688,2	94,5
Հանգիստ, մշակույթ և կրոն	124073,0	71070,8	57,3
Կրթություն	789280,9	760086,2	96,3
Սոցիալական պաշտպանություն	12000,0	10305,0	85,9
Պահուստային ֆոնդ	445000,0	444988,5	100,0
ԸՆԴԱՄԵՆԸ	**2336298,2**	**2161413,9**	92,5

Գավառ համայնքի 2023 թ. վարչական բյուջեի ծախսային մասն ըստ տնտեսագիտական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը:

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	Տոկոս
Աշխատողների աշխատավարձեր	4111	388825,2	369470,2	95,0
Պարգևատրում	4112	35000,0	28389,4	81,1
Բանկային ծառայությունների ծախսեր	4211	35,0	22,0	62,9
Էներգետիկ ծառայություններ	4212	48177,9	41956,6	87,1
Կոմունալ ծառայություններ	4213	2000,0	1841,4	92,1
Կապի ծառայություններ	4214	4850,8	3342,3	68,9
Ապահովագրական ծախսեր	4215	1139,5	633,0	55,6
Գույք և սարքավորումների վարձակալություն	4216	5171,0	4846,1	93,7
Ներքին գործուղումներ	4221	2100,0	1155,0	55,0
Արտասահմանյան գործուղումներ	4222	5000,0	200,0	4,0
Համակարգչային ծառայություններ	4232	4760,0	4356,0	91,5
Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն	4233	400,0	0,0	0,0
Տեղեկատվական ծառայություններ	4234	8170,0	6693,4	81,9
Ներկայացուցչական ծախսեր	4237	7300,0	6634,3	90,9

Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	4239	37500,0	26199,1	69,9
Մասնագիտական ծառայություններ	4241	19550,0	7055,1	36,1
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	80215,7	69856,1	87,1
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	8278,0	4787,9	57,8
Գրասենյակային նյութեր	4261	4520,0	3567,0	78,9
Գյուղատնտեսական ապրանքներ	4262	399,0	396,0	99,2
Տրանսպորտային նյութեր	4264	31028,3	27006,6	87,0
Առողջապահական և լաբորոտոր նյութեր	4266	300,0	0,0	0,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	5725,2	4383,8	76,6
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	9800,0	5771,5	58,9
Սուբսիդիաներ	4511	922047,6	887806,6	96,3
Ընթացիկ դրամաշնորհ	4637	14294,9	13939,3	97,5
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	4495,0	2445,0	54,4
Կապիտալ դրամաշնորհ	4655	69510,0	27509,9	39,6
Այլ կապիտալ դրամաշնորհ	4657	6300,0	6294,8	99,9
Այլ նպաստներ բյուջեից	4729	123745,1	121620,1	98,3
Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդ. կազմակերպ.	4819	12800,0	12732,7	99,5
Պարտադիր վճարներ	4823	26280,0	24434,2	93,0
Այլ ծախսեր	4861	1580,0	1080,0	68,4
Պահուստային ֆոնդ	4891	445000,0	444988,5	100,0
ԸՆԴԱՄԵՆԸ		**2336298,2**	**2161413,9**	**92,5**

Վարչական բյուջեի չկանխատեսված կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար նախատեսվել է 4,000.0 հազար դրամ պահուստային ֆոնդ, որից Գավառ համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ ծախսվել է 3,988.5 հազար դրամ 2023 թվականի օգոստոսի 5-19-ը կայանալիք Համահայկական ամառային 8-րդ խաղերին մասնակցած մարզիկներին սպորտային հագուստով և կոշիկներով ապահովելու նպատակով:

2023 թվականի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը կազմել է 1,832,539.8 հազար դրամ, որը կատարվել է 1,496,932.4 հազար դրամով, կամ 81.7 %-ով:

Գավառ համայնքի 2023 թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը:

Ծախսերի անվանումը	Պլան	Փաստացի	որից՝ սուբվենցիա	Տոկոս
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	**225872,4**	**179532,6**	**88205,3**	79,5
Օրենսդիր և գործադիր մարմիններ	179127,4	169163,1	88205,3	94,4
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	46745,0	10369,5	0,0	22,2
Պաշտպանություն	3000,0	2464,0	0,0	82,1
Տնտեսական հարաբերություններ	451760,7	408843,8	180004,4	90,5
Շրջակա միջավայրի պաշտպանություն	10000,0	2500,0	0,0	25,0
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	219060,2	214015,2	124960,0	97,7
Հանգիստ, մշակույթ և կրոն	628860,1	465682,4	313210,5	74,1
Կրթություն	293986,4	223894,4	95995,2	76,2
ԸՆԴԱՄԵՆԸ	**1832539,8**	**1496932,4**	**802375,4**	**81,7**

Գավառ համայնքի 2023 թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասն ըստ տնտեսագիտական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը:

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	որից՝ սուբվենցիա	Տոկոս
Շենք և շինությունների ձեռքբերում	5111	9245,0	9243,5	0	100,0
Շենք և շինությունների կառուցում	5112	631221,5	402576,5	190449,2	63,8
Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	678707,7	638879,0	324303,7	94,1
Տրանսպորտային սարքավորումներ	5121	17600,0	9649,0	0	54,8
Վարչական սարքավորումներ	5122	20000,0	11165,7	0,0	55,8
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	448794,0	412455,7	287622,5	91,9
Նախագծահետազոտական ծախսեր	5134	26971,6	12963,0	0,0	48,1
ԸՆԴԱՄԵՆԸ		**1832539,8**	**1496932,4**	**802375,4**	**81,7**

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը՝ 441,000.0 հազար դրամ ամբողջովին ուղղվել է ֆոնդային մաս և ծախսվել է: Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը կազմել է 67,553.5 հազար դրամ, որից ծախսվել է 66,799,3 հազար դրամ, իսկ դիֆիցիտի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող 110,588.1 հազար դրամ տարեսկզբի ազատ մնացորդը ծախսվել է ամբողջությամբ: